

11614 - Lee's Creek

Friend of a blyde yacht

J.H. Blakie 1908

891.99

CP-47

2011-07

ՀԵՂԻՆԵ ՄԵԼԻՔ-ՀԱՅԱՍՏԱՆԻ

891.59  
93

11-37

ԱՐ

# ՔԱՅՆ ՕՐ ԳԵՏՆԻ ՏԱԿ

Հանրահանի պատմածը

1001  
1002  
1003

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Արտատպւած «ՀԱՅԿԵՐ» ամսագրից

Թ. Բ. Ֆ. Լ. Բ. Ո.  
Եթերուած սպառակ ՀԱՅՐԱԿՈՒ Ա. Պ. Եղիզարեանի  
1908 (30)



43863

# የበሸሚያ ቤት ማስታወሻ ሰነድ

## Հանիքահանի պատմածը \*)

ԵՐԱԿԱՆ ԼԵՎՈՒՄ

Ես բանում էի հանքի խորքում. գողծիրովս քանզում  
Էի ապառաժը: Ընկերս ծալապատիկ նստած ճրագը ձեռ-  
քին լոյս էր անում:

Յանկարծ մեր ականջին հասաւ մի խուլ հեռաւոր դցրդին:

—ի՞նչ էր, —բացականչեց ընկերս, ոտի կանգնելով պայմեցած:


Մեր մօտից մի մարդ անցաւ վագէվազ. նա հեռում էր:

\*) Քարածուխը յաճախ գտնուում է շատ խորը գետնի տակ, հաստ ու լայն շերտերով։ Նախ մի երկար հոր են փորում իջնուում մինչև առաջին շերտը, յետոյ աւելի խորը մինչև երկրորդը, երրորդը։ Այդ հորերից ամեն շերտում աջ ու ձախ գնուում են անցրեր, որտեղ բանւորները քանզուում են քարածուխը և փոքրիկ զագոն-ներով հասցնուում մինչև հորը։ Վագոնները քաշում են մարդիկ կամ ձիեր։ Քարածուխը հասցնուում են մինչև հորն և այդտեղ զարդա-կում միծ զամբիւզի մէջ, որ պարաններով իջնուում բարձրանուում է հորի մէջ։ Այդ զամբիւզով իջնում վեր են ենուում նաև բանւոր-ները։ Անցքերը-զալերիները ամեն շերտում քանի զնում՝ ձիւղա-ւորուում են, երբեմն իրար հետ միաւորւելով։ Պատերն ու առաս-տաղները պնդացնուում են շատ անգամ փայտերով, որ փուլ չը գան ու չը ձխլեն բանւորին։ Այդ ստորերկեայ աշխարհուում օդի մէջ գոյանուում է քարածուխի խեղդիչ գաղը։ Եթէ այդ զաղը բռնկի, առաջ է զալիս պայթիւն, և վայ այն հանքահանին, որ մնում է անցքերուում ու չի կարողանուում մի ուրիշ տեղով գուրս զալ լոյս աշխարհը։

Այս պատութիւնը կազմելիս հեղինակը օգտահի է քանուորների այն ցուցմունքներից և տւած տեղեկութիւններից, որ աղէտի առիթով լոյս տեսան Քրանսիական լրտգիրների մէջ.

— Ի՞նչ էր կանգնել անշարժ, — զոշեց նա առանց կանգ առնելու — «Չը լսեցիք... զազի պայթիւնը... զուտ փախէք դուրս»: Եւ անհետացաւ: Նոյն վայրկեանին մեր ճրագներ հանգան և մենք թաղւեցինք թանձը խաւարի մէջ: Օդը սաստիկ խեղղող դառաւ:

— Վաղենք շուտ, ընկերներ, — զոշեցի ես:



Քարածուխի հանքի ընդհանուր տեսարանը

Գլխապատճ վազում ենք, սայթարելով ամեն մի բայլափոխին:

Բայց ուր ենք վազում: Մեր աջ ու ձախից ձգւում են անհաշիւ ոլորուն անցքեր, գալերիներ, որոնք նոյնպէս թաղւած են խաւարի մէջ: Նրանց վրա գտնւում է նոյն տեսակ մութ գալերիների մի ուրիշ շարք, ապա երրորդը, չորրորդը: Ի՞նչպէս գտնենք մեր ճանապարհը այդ ահազին

լաբիլինտոսի մէջ, այս սոսկալի ստորեղիբեայ աշխարհում, երբ զրկւել էինք նոյնիսկ մեր անբաժան ընկեր՝ լապտերի լոյսից: Սովորական ժամանակ այդտեղ զէս ու դէնից լուսաւոր կէտեր են երեսում, բանտորների լապտերները: Իսկ այժմ... Մարել են մեր այդ կենսատու աստղիկները, իրանց հետը տանելով մեր կեանքն ու մեր յոյսերը:

Վազում ենք շարունակ: Յանկարծ մեր առաջթանձը ծուխի մի պատ է բարձրանում: Մոայլ, գարշելի հոտ ունեցող խաւարը պատել է մեզ շորս կողմից, այրում է մեր զէմքերը: Գլուխս պառլտ է գալիս: Խեղղւելու վրա ենք: Շտապով ետ ենք վազում այս գժոխիբից:

Ես մտքում գրել եմ անպատճառ աղատւեմ և ազատեմ ընկերներիս: Վճռել եմ՝ տանեմ բոլորին վերևի յարկը, հասցնեմ հանքահորի ստորոտը, որտեղից միշտ վեր են ելնում վագոնետները: այնտեղ կը նստենք նրանց մէջ և կը բարձրանանք վեր, դուրս:

Եւ մենք փորձեր ենք անում վերի յարկը ընկնելու: Ճանապարհին նոր ընկերների ենք հանգիպում և նրանց էլ մեզ հետ տանում:

Բայց տւազ, ուր որ զնում ենք, այդ անիծած զագերը անանցանելի պատնէշի նման մեր ճանապարհը կտրում են ու ետ հրում:

Միենայն տեղում չենք կարողանում մնալ, զէս ու զէն ենք նետում, շրջում, պտաւում այդ մութը հանքում, որը չի ուզում մեզ բաց թողնի ու պինդ բռնած պահում է մեզ իր ուայլ ճիրաններում:

Բոլորովին յօգնած և յօսս կտրած ես մեքենաբար ձեռքս տանում եմ զրպանս:

Ի՞նչ կայ այնտեղ. ժամացոյցս. մի հասարակ պարզ ժամացոյց, ժանգոտած ու մաշւած, որի վրա հանքը մի անջնջելի դրոշմ է գրել:

Բայց զարմանալի է. այդ ժամացոյցը այժմ ինձ վրա մի տարօրինակ տպաւորութիւն է պնում:

Նա միակն է այս քաօսի մէջ, որ մի կանոնաւոր, խելացի բան է ներկայացնում։ Նա մեզ միացնում է ամբողջ աշխարհի հատ։ Նրա շըխկչը խկոցը զարմանալի կերպով ինձ հանգստացնում է ու սիրտ է տալիս։ Նա կենդանի է, նա խօսում է։ Նրա շըխկչը կարծես ասում է ինձ։ «Պինդ կաց, սիրելիս, խելզ մի կորցնի. հետեւիր ինձ և դու չես կորցնի ժամանակի թելը. ժամեր ու օրեր հաշւելով, դու կը կարգաւորես փրկութեանդ գործը և կազմատես։

Այս այդ բարերար շըխկչը կոցը։

Ե՞նչքան նա սփոփել է մեզ բոլորիս մեր այդ 20 օրուայ գերեզմանային դաժան կեանքի ժամանակ, երբ մենք տաստիկ սովի, ծարաւի ու յոգնածութեան ազդեցութեան տակ կատարեալ յուսահատութեան էինք հասնում։ Ամեն մէկը վերցնում էր նրան, շոյում, փայփայում, ականջին դնում, լսում ու անվերջ լսում, և չէր ուզում բնաւ բաժանեի։ Կատարեալ երեխայ էինք դարձել։

Ես շուտ-շուտ ժամացոյցս լարում էի, որ չը կանգնի։

\* \* \*

Այսպիսով ժամացոյցիս շըխկչը կոցը վերադարձեց ինձ սառնասրտութիւնս։ Ես ինձ նորից ուժեղ զգացի, ամաչելով փոքրոգութիւնից։

— 2է, պէտք չէ որ յուսահատեմ— ասացի ինքս ինձ։ — պէտք է մի ճար գտնեմ մեր զլուխը ազատելու։

Ընկերներս անշարժ պառկած էին յուսահատ։ Վճռեցի յոյսի մի նշոյլ վառեմ նրանց սրտում և ստիպեմ շարժելու։

— Լսեցէք, ընկերներ, մեզ կանչում են. հանքը զարկում են. — զոշեցի ես։

«Հանքը զարկում են»։ Ինչ զրաւիչ խօսրեց մեզ պէտքութ, կեանքից կտրւած մարդոց համար։

Դա նշանակում էր, որ այնտեղ, վերեսում, ուր որ փայլուն արեգակը շոյումէ երկիրը իր տաք ոսկեզօծ ճառագայթներով, այնտեղ արդէն մտածել են մեր մասին և ամեն ջանք գործ են գնում մեզ ազատելու։

— 7 —

«Հանքը զարկում են»։ սա մի ձայն է, որ երաժշտութիւնիցն էլ քաղցը է, որ իշնում է վերևից պահապան հրեշտակի նման մեր յոյսերը վառ պահելու և յորդորելու, որ մենք համբերութեամբ տանենիք մեր բոլոր նեղութիւնները, մինչև որ մեր փրկիչները զան հասնեն մեզ։

Հանքը զարկելը հազորգակցութեան մի միջոց է հանգում, իբ տեսակի մի հեռախօս, ի հարկէ շատ աւելի պարզ ու հասարակ. նրա միջոցով հանքահանները իմաց են տալիս իրար, երբ մէկի հետ զժրախտութիւն է պատահում, զարկելով այդ նպատակով շինուած խողովակը, որ իրար է միացնում զալերիները։ Նոյն բանն են անում վերեւի յարկից՝ վտանգւածների մասին տեղեկութիւն ստանալու համար։

Եւ տեսէք, ինչ տաքօրինակ բան է մարդու երեակայութիւնը։ Այդ կոչը, որ զոյութիւն չունէր, նրանք բոլորն էլ պարզ լսում էին։

Սբագ ոտի թուան, և նորից ճանապարհ ընկանք։ Գնում ենք անվերջ նեզ անցքերով, բարձրանում ենք, իջնում, մագլցում, սահում։

Գալերիի վերի մասում մի ինչ որ պատնէշի ենք հանգիպում, Զեռքերով շօշափում ենք և ամբողջ մարմնով ցնցում։ Գա զիակների մի ամբողջ զէդ է՝ կուտակւած և զէս ու զէն ցրւած։

Գիտակները զեռ սառած չեն։ Պարզ էր, որ մեր զալուց բիշ առաջ էին մտել իրանց յաւիտենական բունը։ Խեղճեր. երեխ նրանց բանելու տեղը շատ մօտիկ է եղել պայմումի տեղից և մեզանից շուտ են ենթարկել վատ զագերի ազգեցութեանը։ «Անշուշտ մեզ էլ նոյն վիճակն է սպասում մօտ ապագայում», մտածում եմ ես և զարձեալ ցնցում։

Շտապով թողնում ենք այդ սոսկալի վայրը և զնում... անվերջ զնում։

Ոտներս տանում են ինձ բոլորովին մերենաբար. Էլ չը զիտեմ թէ որտեղ ենք զտնուում մենք, ուր ենք զնում։

Թաքելս չեմ կարողանում կենտրոնացնել մեր զբութեան վրա, որ որոշեմ անելիքս: Եարունակ մտածում եմ իս սիրելիների սասին: արդեօք բախտ կունենամ նըանց նորից տեսնելու: Ե՞նչքան լաց է լինում երեի կինս՝ փոքրիկիս երկած, ինձ անշուշտ կորած համարելով:

\* \* \*



Բոլորս լուռ ենք, տխուր մտած մունքների մէջ խորասուզած:

Ճնշող լուռթեան մէջ ականջիս համում է մի ինչոք հեկեկանք: Ես սթափում եմ:

—Այդ ով է լաց լինում:

Դա փոքրիկ Յովհաննէսն էր, մեր ամենափոքրիկ տասը տարեկան հանքահանը: Պայթման ժամանակ նա

գայր էր ընկել, կոտրել էր իր լամպը ու սասափիկ ցաւացրել գլուխը:

Սկզբուն ահից ցաւը չէր զգացել, բայց այժմ քիչ հանգստանալուց յետոյ զգում էր վէրը և կանչում մայրիկին, որ այնքան լաւ գիտէր կապելնըան, խնամել:

Երեխայի արտասուրը այս մութը զժոխըում, ինչպէս մի հրէշային բան, տանջում էր ինձ: Ես մի գայրոյթ էի զգում այն անձերի զէմ, որոնք ուզարկել էին այս թոյլ փոքրիկ արարածին այստեղ աշխատելու, այսրան շուտ ենթարկելով նըան կեանքի բոլոր հարւածներին:

—Համբերիր մի քիչ, —ասում եմ ես, շոյելով նըան գլուխը: —Եռւտով զուրս կը զանք հանքից, վէրը կը կապեն, և կը լաւանաս:

Երեխան լուռմ է: Բայց ահա մի ուրիշը, արդէն մի շափահաս բանւոր, սկսում է մըթմըթալ քթի տակ:

—Հը, զու ինչ ոմնես:

—Ի՞նչու խաբեցիր, որ հանքը զարկում են: Հապա որտեղ է, եթէ զարկում էին:

—Առաջ զարկում էին, հիմա չեն զարկում: Ի՞նչ կայ որ: Ինձ այդպիսի զէպք պատահել է արդէն մի անգամ:

Եւ ես նըանց մի ամբողջ պատմութիւն եմ ասում մի շեղած զէպքի սասին, միայն թէ մի ձայն խանգարի բոլորիս ճնշող լուռթիւնը:

Այսպէս խօսելով շարունակում ենք ճանապարհը: Յանկարծ մեր առաջ մի բան է շարժւում մթութեան մէջ: Եւ լսուս է մի ձայն, մի սարդկային ձայն, որի մէջ մի անսահման ուրախութիւն էր հնչում:

—Ահա, ահա, զալիս են մեզ ազատելու:

Այդ մի ձայնից յետոյ լսում է երկրորդը, երրորդը: Նըանք հինգ հոգի են այստեղ: Տեղներիցը վեր են կենում և ուրախ ուրախ զէպքի մոզ են զալիս:

Մթութեան մէջ վինտրում ենք իրար, ձեռներս պարզած, աշքակապուկի խաղացող երեխաների նման, ու ասում ենք մեր անունները: Եւ յայտնում ենք նոյնպէս,

որ մենք էլ նրանց նման հանքի գժբախտ բանտարկեալ-ներն ենք։ Դժւար է նկարագրել խեղճերի յուսահատութիւնը։ Պայթիւնից յետոյ նրանք այնպիսի ծանր մնշւած զրութեան էին հասել, որ կատարելապիս կորցրել էին մտածելու, խորհելու ու իրանց ազատութեան համար մի բան ձեռնարկելու ընդունակութիւնը։ Նրանք ընկել էին գետին ու մնացել անշարժ, իրանց բոլորովին կորած համարելով։ Ես նրանց էլ առաջարկեցի, որ մեզ հետ միանան ու գնանք միասին ելքը վնտրելու։

\* \* \*

**Անցնում են երեք երկար դաժան օրեր։**

Թափառումների ժամանակ ընկերների մի նոր խմբի հանդիպում։ Նրանց մէջ զտնւում է Պրիւփօն, որին հանդիպելը ինձ մեծ ուրախութիւն է սրատճառում։ Պրիւփօն շատ հմուտ ու փորձառու բանուր է։ Արդէն 33 տարի է, որ նա աշխատում է մեր հանքում, ուր նա մտել էր գեռ 7-ը տարեկան հասակում։ Նա ճանաշում է հանքը իր հինգ մատների պէս։ գիտի նրա բոլոր անցրերը ու ամեն մի ծակ ու ծուկը։ Նրանից աւելի լաւ ընկեր շիկարելի երևակայել այս դժւար հանգամանքներում, մանաւանդ աշքի առաջ ունենալով նրա սառն, չընկճող բնաւորութիւնը, նրա խելացի առողջ դատողութիւնը։ Նա իր փորձառութեամբ, ես իմ գիտութիւնովս (ես միակն էի, որ աւարտել էի հանքային դպրոցի ամբողջ դասընթացքը), մենք միացած ուժերով գուրս կը բերենք եր ընկերներին այս փորձանքից։

Պրիւփօն հետ խորհուրդ արինք մեր անելիքի մասին։ Վճռեցինք առժամանակ զաղարեցնենք մեր թափառումները, թթնենք վերեկի յարկը համնելու ապարդիւն ջանքերը, մինչև որ անցնեն ու ցըւեն այնտեղ զտնւող զագերը։ Իսկ առայժմ լաւ է մի քիչ հանգստանանք և զբաղւենք մեր ներկայ դրութիւնը բարւորելու խնդրով։

Ամենից շատ մեզ տանջում էր ուտելիք ճարելու հարցը։

Մինչև այդ ըոպէն բաղցը այնքան էլ չէինք զգացնէլ շնորհիւ մեր լարւած ջղերի։ Բայց առաջին օրերի յուգումը որ անցաւ, բաղցը վրա հասաւ իր սարսափելի տանջանքներով։ Ստամորսը կտրուկ կերպով ուտելիք էր պահանջում։ մկանունքները ուժգին կծկում էին։ Անհրաժեշտ էր մի բան ուտել մեր ուժերը պահպանելու համար։

Բայց ինչ ուտէինք։

Հետներս ունեցած կերակուրը ժողել էինք մեր բանելու տեղումը և այժմ չէինք կարողանում դտնել։

Յանկարծ յիշում ենք հանքի փայտէ շինւածքը, այն փայտերը, որոնք ամուր ցանցով պատում են անցքերի պատերն ու առաստաղը և պահպանում են վուլ գալուց։ Եւ մենք սկսում ենք եղունզներով քերթել այդ ցանցի կաղնին, պոկում ենք նրա կեղեր, սաստիկ արիւնութելով մեր մատները։ Դնում ենք այդ կեղեր մեր բերանը ու թքով լաւ թրջելուց յետոյ ծամում, փափկացնում, զարձնում ծամօնի նման մի բան։

Սակայն դրանից յետոյ զալիս է զործի ամենադժւար մասը, այդ մեր շինած ծամօնը կու տալու հարցը։ Այդ ծամօնը սաստիկ ծակոտում էր մեր կոկորդը, բայց մարզս ամեն բանին ընտելանում է, և տեսէր որ մեզանից ոչ մէկը սիրտը չը թափեց այդ տարօրինակ կերակուրից։

Զրի հարցը աւելի աջող լուծւեց։ Պրիւփօն յայտնեց, որ մեզանից ոչ էլ այնքան հեռու մի աղբիւր էր գտել։ Մենք բուռն ուրախութեամբ ընդունեցինք այդ գիւտը, մեր խորթ-մայր հանքի այդ անսպասելի նւէրը, բանի որ ծարակից աւելի էինք տանջւում բան սովից։ Այնուհետև մենք ամեն օր գնում էինք հերթով աղբիւրը—ջրի թանկագին կաթիւները հաւաքելու։

Մեր սոված փորը «կշտացնելով» հանգերձ՝ չէինք մոռանում անշուշտ և մեր զլիսաւը հոգսը՝ փրկութեան գործը։ և ամին օր գնում էինք փոքրիկ հարթակը, որտեղից դէպի վեր էին բարձրանում հաղորդակցութեան խողովակները, և հերթով «զարկուս էինք հանքը» ու զար-

մկում, այն լիտենթ յոյսով, թէ զուցէ վերեից մեզ լսեն ու գան փրկութեան։ Բայց աւաղ։

Պրիւզօի խմբում կար մի ձի, որը բաժանում էր մեզ  
հետ մեր բոլոր զբկանքները։ \*

Սյդ ձին պայթումի ժամանակ տանելիս էր եղել ա-  
ծուխով լի սայլակը հանքի խորքից դէպի հանքի հորը և  
այդպէս էլ մնացել էր ճանապարհին, հեռու իր ախոռից։

Արդէն ուժը տարի էր, որ ձին անում էր իր այդ  
աշխատանքը, իր մշտական անցուղարձր հանքի խորքում։  
Ուժը տարի էր, որ նա արեգակի լոյսը չէր տեսել, ապ-  
րելով շարունակ հանքում։ Եւ նա այնքան ընտելացել էր  
իր այդ միակերպ կեանիքին, որ իրան շատ վատ էր զգում  
այժմ, երբ շուրջը ամեն ինչ դադարել էր աշխատելուց։  
Նա անհանգիստ կերպով շարժում էր, մօտենում էր մեղ,  
կարծես ուզում էր մեզ հարցնի, թէ ինչ է կատարեռում  
իր շուրջը, ինչու էլ չենք լծում իրան ածուխով լի  
սայլակին, չենք տանում դէպի հանքի հորը, որտեղից  
ածուխը բարձրացնում են վերև, դուրսը, կամ վեր-  
ջապէս ինչու չենք հասցնում իրան ախոռը, որտեղ իր հա-  
մար շատ զարի կայ, մինչդեռ այստեղ ինքը պիտի սոված  
մնայ։

Ախոռը, աւաղ, գտնում էր վերևի յարկում, զուրսելրի  
մօտ, որը մեզ համար էլ մնում էր անհասանելի։

Խեղճ ձին սաստիկ բազցած էր. արդէն ուժ օր էր,  
որ նա ոչ մի բան չէր կերել. և ինչ կարող էինք մենք  
տալ նրան, հազիւ մի բանի կալիթիլ ջուր միայն...

Մեզ սաստիկ տանջում էր խեղճ անհասունի ողբալի  
զրութիւնը— մենք անվերջ շոյում էինք նրա վիզը ու  
ասում։

«Ինչ արած, սիրելիս, այսպէս դառն է մեր բոլորիս  
վիճակը—դու էլ մեզ հետ պիտի տանես մեր ծանր լուծը»։

Եւ ձին կարծես հասկանում էր մեր այդ խօսքերը,  
ու տխուր խրխնջալով վերադառնում էր իր տեղը։

Մեր բանտարկութեան իններորդ օրը ձիու խթխնջոցը  
աւելի ողբալի դարձաւ։ Միքոս ճարում էր, նրա հառա-  
շանքները լսելիս։ Ես զգում էի, որ ձին արդէն սատկե-  
լու վրա է։

Բայց խղճալու զգացմունքի հետ միասին իմ մէջ զարթ-  
նում էր մի ուրիշ զգացմունք ևս, որը այնքան գարշելի  
էր, որ նրանից սարսուռ էր անցնում ամբողջ մարմնովս-  
ես սարսափած դառնուռ և լինկերներիս կողմը՝ մտա-  
ծելով, չը լինի թէ նրանք նկատեն կամ աւելի շուտ՝ զգան  
իմ սոսկալի միտքը։ Ինձ թւում էր, թէ մթութեան մէջ  
անգամ նրանք պիտի կարողանան կարդա և նսիս զրոշ-  
մըւած յանցաւոր միտքը։

Սակայն ընկերներս էլ զարմանալի խոր լռութիւն-  
էին պահում։ մի ինչ որ ծանր ճնշող լռութիւն, որ խօսքից  
աւելի արտայալածի էր, որ ցոյց էր տալիս, թէ բոլորիս  
մտքերը պաշարել էր միենոյն յանցաւոր գիտաւորութիւնը։

Նորից լսեց ձիու ծանր հառաշանքը. նա մեզ կար-  
ծես օգնութեան էր կանչում, որ գնանք մօտը, թե թեսաց-  
նենք իր տանջանքները։ Զէ որ այզքան տարիներ ընկերներ-  
ենք եղել, միասին քաշել ենք շարքաշ կեանքի ծանր լուծը։

Բայց... Ընկերական զգացմունքը արդէն մեռել էր մեր  
սրտերի մէջ։ Մենք այլևս մարդիկ չէինք։ Ամէն մէկս մի-  
մի գագան էինք զարձել, զազան, որը պատրաստում է իր  
որսին մահացու հարւած հասցնելու։

Չին թուլանում էր։

Պէտք է շտապէինք, թէ չէ մեր առաջ մի անշունչ դիակ  
պիտի գտնէինք։

Բոլորս մի անզամից ոտի ելանք, կարծես մի անյայտ-  
հրամանով, ու գաղտագողի քայլերով խոր լռութեան մէջ  
ուղեորւեցինք դէպի այն կողմը, որտեղից հասնում էին  
մեզ ձիու թոյլ հառաշանքները։

Ահա և նա։

Մեզանից մէկը կաստելը, վերցրեց լծակը, գտաւ ձիու  
ճակատի ոսկօրը ու մի ուժեղ հարսածք անշնչացրեց նրան։

Մինք սաստիկ բաղցած էինք: Արդէն ինը որ էր,  
որ բացի կաղնու կեղեից մենք բան չէինք կերել:  
Եւ մենք բոլորս էլ ազահ գայլիրի նման ձիու վրա  
թափւեցինք, իրար բոթելով մթութեան մէջ և սկսեցինք  
պատառակել նրա գեռ տաք մարմինը:

Մեր բաղցը յագեցնելուց յետոյ, ձիու դիակը բաշե-  
ցինք ինչքան կարելի էր հեռու մի անկիւն և տախտակ-  
ներով ծածկեցինք:

Չին նոր էր սատկել, բայց նրա միսը արդէն հոտում  
էր, շնորհիւ մեզ շրջապատող զգւելի օպին, որը ամեն ինչ  
ապականացնում էր...

Օք մէկ անգամ մօտենում էինք այդ դիակին, տախ-  
տակները բարձրացնում, պատում նրա մից մի-մի կտոր  
ու այսպիսով յագեցնելով մեր բաղցը՝ շտապով հեռանում:

\* \* \*

Օրերն անցնում են իրար ետկից առանց մեզ որեէ  
նորութիւն բերելու:

Անշարժ պառկած մէջրիս վրա, մտածում եմ, և մըտ-  
քերս վազում են ազատ ու ճկուն, անարգել կերպով անց-  
նում են բոլոր փուլ եկած ճանապարհները և հայրտ  
դուրս են գալիս լոյս աշխարհը:

Իմ առաջս անցնում է իմ բոլոր կեանքս իր վշտե-  
րով և ուրախութիւններովը: Եւ ինչ թէ են ուրախու-  
թիւնները համեմատած վշտերի հետ:

Ի՞նչ դաժան է իսկապէս հանրահանիս կեանքը: Այդ  
ես զգում եմ մանաւանդ այժմ մեր ծանը կացութեան մէջ:  
Մեր կեանքի կէսը մենք անց ենք կացնում այս մութը,  
խոնաւ տեղերում՝ լոյսից, թարմ օդից զրկւած, աշխար-  
հից կտրւած. շարունակ մեր ծանը աշխատանքով զբաղ-  
ւած, մի աշխատանքով, որի ժամանակ ամեն մի վայր-  
կեան մահւան փտանդ է սպառնում:

Երբէք մենք վստահ կերպով չենք կարող ասել, որ  
երեկոյեան կը վերապառնանք տուն, ընթրիքի: Վտանգը  
ժամուկեան սրի պէս միշտ կախւած է մեր վլուխներին:

Կամ հրդեհ է լինում, կամ գազի պայթիւն, կամ որևէ տեղ  
գալերին է փուլ զալիս և բոլորին թաղում փլւածների  
տակ:

Իսկ այնուեղ վերև ահազին ընտանիքներ մնում են  
սոված, անտէր, անօգնական:

Ամենայաջող հանգամանքներում անգամ ինչը ան-  
մաշում է մեզ այդ կեանքը, ինչքան հիւանդութիւններ է  
առաջ բերում, ինչպէս վաղաժամ ծերութիւն:

Եւ ինչ վճար ենք ստանում այս տաժանակիր աշխա-  
տանքի համար: Հազիւ այնքան, որ կարողանանք մեր գոյու-  
թիւնը պահպանել՝ այդ շարքաշ աշխատանքը շարունակե-  
լու համար:

Իմ սրտիս մէջ ծնունդ է առնում և ուժեղանում է մի  
բուռն բողոք, բողոք աշխարհի զոսկալի անարդարութեսն  
դէմ, որի շնորհիւ մեծամասնութիւնը աշխատումէ, բըտինք  
է թափում, կեանքը կաթիլ կաթիլ մաշումէ, փոքրամա-  
սնութեանը քաղցը ապրուստ վայելել տալու համար:...

Յիշում եմ մեր աշխատանքի տունը, որտեղ բոլորս  
հաւաքում էինք. խորհում, վիճում, մեր գրութիւնը բար-  
տորելու համար, մեր խախտած իրաւունքները ձեռք բերե-  
լու համար:

Յիշում եմ այն խօսքերը, որ փորագրած են տան  
մուտքի վրա. «Բանւորները իրանք իրանց սեփական ջան-  
քերով պիտի ձեռք բերեն իրանց ազատութիւնը»:

Այս խօսքերը աշքերից չեն հեռանում. նրանք փայ-  
լում են իմ առաջ մթութեան մէջ հմայիչ վայլով և մի  
բաղցը յուզում առաջ բերում:

Այս, զա հազար անգամ ճիշտ է: այս անցրից էլ պի-  
տի ազատւենք մեր սեփական ջանքերով. չը պիտի մնանք  
ձեռները ծալած, սպասելով, մինչև որ վերենից գայ ցան-  
կալի օգնութիւնը, մանաւանդ որ ամեննեին յոյսս չէլ դնում  
հանքի վարչութեան վրա: Զէ որ նրա առաջ դրւած էին  
հանքի շահերը: Հանքը պէտք էր պաշտպանել հրգեհից.  
այդ խնդրի հետ կապւած էր ամբողջ երկը արդիւնա-

գործութիւնը, հազարաւոր ընտանիքների զոյութիւնը: Իսկ  
ինչ զին ունի մի քանի բանուղների կեանքը, քանի որ նրանց  
փրկելու համար ահազին զոհաբերութիւններ է հարկաւոր  
անել և զուցէ նոյն իսկ մարդկային նոր զոհեր տալ:

Եւ վերջապէս ով կարող էր ենթաղքել, որ կարող էին  
մի քանի մարդ ողջ մեալ այդ ընդհանուր աւերման մէջ:  
Դա քիչ էր հաւանական:

Եւ գարմանալի բան. ինչքան տւելի սաստկանում էր  
իմ մէջ այն համոզմունքը, որ ոչ մի տեղից օգնութիւն չը  
պիտի ստանանք, այնքան աւելի սաստկանում էր և վստա-  
հութիւնս դէպի իմ ուժերս, և իմ մէջ բուռն ցանկութիւն  
էր ծնունդ առնում ամրող աշխարհը կուի հրաւիրելու:

\* \* \*

Մտածմունքներս յայտնում եմ Պրիվօխն: Նա ինձ հետ  
միանգամայն համաձայն է: Երկուսով ըսկում ենք մտա-  
ծել, թէ ինչ ձեռնարկենք:

Մինչև այժմ վերևի յարկը բարձրանալու փորձերը  
անաջող էին եղել, որովհետեւ զագերը անտանելի պատ-  
նէշի նման մեր առաջը կտրում էին: Հարկաւոր էր դար-  
ձեալ փորձել, մի գուցէ այդ զագերը ցրւել են արդէն:

Յայտնում ենք մեր ընկերներին, որ լաւ է մեր բախտը  
փորձենք ու կրկին ճանապարհ ընկնենք:

Բայց նրանք մի մեծ աղմուկ են բարձրացնում:

— Ի՞նչպէս. նորից գնանք, որպէսզի մի նոր փորձան-  
քի մէջ ընկնենք: 2է, եղբայրներ, լաւ է մնանք այստեղ  
հանգիստ, սպասենք, մինչև որ մեր ինժիներները դան,  
մեզ այստեղից գուրս բերեն:

Նրանք վճռական կերպով յայտնում են, որ տեղներիցը  
չեն շարժւի և նոյնիսկ աւելի լաւ են համարում մեռնեն:

Արինս զլուխս խիեց:

— Թշւառականներ, — բղաւեցի ես բոռնցքներս սեղ-  
մելով:

Մի բոլէ պատրաստ էի յարձակւել նրանց վրա,  
նրանց գլուխները ջախջախելու:



43063